

ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՅՔԵՐՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՍՆՆԴԱՅԻՆ ԱԼԵՐԳԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԿԱԼԻԿՅԱՆ Զ.Գ., ԳԱՄԲԱՐՈՎ Ս.Ս.

Երևանի Մ. Զերացու անվ. պետական բժշկական համալսարանի կլինիկական ալգերիայի
ամբիոն Երևան, Հայաստան

Եվրոպայում սննդային ալերգիայի (ՍԱ) ուսումնասիրությանը նվիրված EuroPrevall նախագծի մեթոդաբանությանը համաձայն, Երևանի բուհերում սովորող ուսանողների շրջանում անցկացվել է երկփուլ հետազոտություն: Առաջին համաճարակաբանական փուլում կատարվել է ուսանողների հարցում (n=4071), հարցաթերթի օգնությամբ: Այնուհետև, ալերգիկ երևույթներ ունեցող ուսանողների խմբերում ալերգաբանական անամնեզի հավաքագրումից և ֆիզիկական զննումից հետո, ընտրվել են 195 սննդային գերզգայունություն (ՍԳ) նշող ուսանողներ, որոնցից 132 (արձագանքումը 67.7%) կամավորության սկզբունքով մասնակցել են կլինիկական փուլի երկրորդ՝ ալերգաախտորոշման շրջանին: Յուրահատուկ կլինիկական ախտորոշումը իրականացվել է նախ մաշկային ալերգիկ փորձերի (ՄՓ) եղանակով, որոնց ժամանակ օգտագործվել են սննդային, ծաղկափոշային և կենցաղային ալերգեններ: Այնուհետև, հիմնվելով ՄՓ արդյունքների վրա և համատեղելով դրանք անամնեստիկ տվյալների հետ, ընտրվել են այն 45 ուսանողները, որոնք մասնակցել են բաց օրալ սադրիչ թեստավորմանը (ՕՍԹ):

Ըստ մաշկային ալերգաթեստավորման տվյալների, սննդի հանդեպ ալերգիկ երևույթներ ունեցող 91 (68.9%) ուսանողների մոտ գրանցվել են ՄՓ-ի դրական արդյունքներ՝ սննդային ալերգենների հանդեպ: Առավել հաճախ սննդային գերզգայունություն հայտնաբերվել է բանանի, կիվիի, ընկույզի, գետնանուշի, գազարի, կարտոֆիլի, լուլիկի, խաղողի, կիտրոնի, կաղնու, մեղրի, ինձորի ալերգենների նկատմամբ: Չվի, ձկան, հավի մսի, կաթի և խոզի մսի ալերգենների հանդեպ գերզգայունության տարածվածությունը զգալիորեն ավելի ցածր է: Բուսական ծագում ունեցող սննդային ալերգենների հանդեպ հայտնաբերված գերզգայունությամբ ուսանողներից 76.7%-ի մոտ նաև գրանցվել է գերզգայունություն՝ ծառերի, մոլախոտերի և դաշտային խոտերի ծաղկափոշային ալերգենների նկատմամբ: ՄՓ-ի և նախապես հավաքագրված անամնեզի տվյալների համադրմամբ, վերջինս հաստատվել է, միջինը, 66.1% դեպքերում: ՕՍԹ-ի իրականացման տվյալների ՄՓ-ի և անամնեզի տվյալների հետ ընդհանրացման արդյունքում, ՍԱ ախտորոշումը հաստատվել է 65 (49.2%) ուսանողների մոտ, ինչպես նաև հայտնաբերվել է Երևանի բուհերում սովորող ուսանողների շրջանում հիմնական պատճառային սննդային ալերգենների ընդհանուր կառուցվածքը: